



## **ՀԱՅԿՅԱՆ 4503 ԹՎԱԿԱՆ**

### **2010 թ. Օգոստոսի 11-2011 Օգոստոսի 10**

Հին աշխարհի աստղագիտության և տոմարագիտության օրրաններից մեկը եղել է Հայաստանը, և մարդկային հնագույն քաղաքակրթության լավագույն արտահայտություններից մեկը հենց խտացված է հայկական տոմարի մեջ: Հնուց ի վեր օրացույցն ու տոմարը հայ ժողովրդի մեջ ամուր արմատներ են գցել:

Բուն հայոց թվականը հաշվվել է այս թվարկությունից առաջ 2492-ից. այսինքն՝ այս թվարկության 2011 թվականին կհամապատասխանեն 4503-4504 թվականները: Ղևոնդ Ալիշանի կարծիքով հայոց Բուն թվարկությունը սկսվում է Բելի հանդեպ Հայկ Նահապետի տարած հաղթանակի օրվանից և այդ պանծալի հաղթանակով սկսվող թվականի մեջ ամփոփված են մեր ա-

կունքները, մեր պատմության հարստությունը. հերոսական պատուհաններ ու առասպելներ: Այսպիսով Հայկյան տոմարում հայկյան ոգի ու կորով կա, որոնցից զուրկ է Քրիստոսի հետ կապված տոմարը:

Ըստ հայկական օրացույցի՝ տարին բաժանվում է 12 ամիսների՝ յուրաքանչյուրը 30 օր, իսկ 13 ռդ լրացուցիչ ամիսը՝ 5 կամ 6 օրով:

Ավանդության համաձայն Հայկական օրացույցի ամսանունները կրել են Հայկ Նահապետի ուստրերի և դուստրերի անունները: Դրանք են.

1.Նավասարդ, 2.Հռոժի, 3.Սահմի, 4.Տրե, 5.Քաղոց, 6.Արաց, 7.Մեհեկան, 8.Արեգ, 9.Ահեկան, 10.Մարերի, 11.Մարգաց, 12.Հրոտից:

Ամսօրերը հաշվվել են ոչ թե ամսվա մեջ օրվա հերթական կարգով, այլ հիմնականում ունեցել են դիցաբանական և սրբավայրերի անուններ: Դրանք են՝

1.Արեգ, 2.Հրանդ, 3.Արամ, 4.Մարգար, 5.Ահրանք, 6.Մազդեդ, 7.Աստղիկ, 8.Միհր, 9.Չոպաբեր, 10.Մուրց, 11.Երեզկան, 12.Անի, 13.Պարխար, 14.Վանատուր, 15.Արամազդ, 16.Մանի, 17.Ասակ, 18.Մասիս, 19.Անահիտ, 20.Արագած, 21.Գրգուռ, 22.Կորդի, 23.Ծմակ, 24.Լուսնակ, 25.Ցրոն, 26.Նպատ, 27.Վահագն, 28.Սիմ, 29.Վարագ, 30.Գիշերավար:

Հայոց անշարժ տոմարով Նավասարդը տևել է օգոստոսի 11-ից սեպտեմբերի 9-ը: Այդ ամսանվան ծագման մասին Անանիա Շիրակացին, Հովհաննես Իմաստասերը և այլ գիտնականներ ավանդում են, որ Նավասարդը Հայկ Նահապետի դուստրերից մեկի անունն է, որով մեր նախահայրը անվանել է տարվա առաջին ամիսը: Նավասարդյան տոմարի ուղեկցվել են երգ-երաժշտութ-

յամբ, պարերով, թատերական ու կրկեսային ներկայացումներով, զինախաղերով ու մարզական մրցույթներով: Այդ մրցույթները կոչվում էին նավասարդյան խաղեր և համահայկական էին:

Քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնապես ընդունելուց հետո նավասարդյան տոների վտարվեցին օրացույցից, բայց նոր տարուն բնորոշ արարողակարգով ու «նավասարդի» տոն անունով այն հազարամյակներ շարունակ նշվում է բնապաշտական աշխարհընկալումը պահպանած հայերի կողմից:

Հայ հասարակությանը դատին հանձնելով **ՀԱՅԿԱՆ 4503 ԹՎԱԿԱՆԻ** Ազգային շարժական օրացույցի ներկա տարբերակը, հարկ համարեցինք նաև սույն հավելվածով հնարավորինս մանրագնահին և մատչելի լուսաբանել Հայոց տոմարի պատմությունը տպագրելով մի հատված Հայկ Բադալյանի «Օրացույցի պատմություն» գրքից:

## ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐ

Հայոց տոմարը շատ հին ծագում ունի, սակայն, թե երբ են հայերն սկսել իրենց ինքնուրույն տոմարական հաշվումները, ցավոք, պատմաբանների և տոմարագետների կողմից դեռևս ինչպես հարկն է չի ուսումնասիրված: Այս չափազանց կարևոր խնդրի հետազոտման դժվարությունը կայանում է նրանում, որ հին հեթանոսական շրջանում հայերի ինքնուրույն տոմար ունենալու կամ չունենալու առթիվ մեզ հասած տվյալները չափազանց աղքատ ու կցկտուր են: Այսուամենայնիվ, ավանդաբար մեզ հասած որոշ փաստարկներ վկայում են այն մասին, որ հայերը հեթանոսական շրջանում ունեցել են ուրույն տոմար: Այս առթիվ հետաքրքրական է մատնանշել պատմահայր Խորենացու վկայությունը այն մասին, որ մինչև հայոց Արտաշես թագավորի ժամանակը (189—160 այս թ. ա.) անուշադրության էր մատնված շաբաթվա, ամիսների ու տարիների շրջանների սահմանելը: Խորենացին այդ առթիվ գրում է, որ մինչև Արտաշես թագավորի ժամանակը հայերը. «...մեծամեծ արուեստից և գիտությանց ունայնացեալք էին... և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք. զշաբաթուց ասեմ և զամսաց և զտարեաց բոլորմանց... եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի»:

Այստեղից պետք է եզրակացնել, որ Արտաշեսի ժամանակ հավանաբար առանձնահատուկ ուշադրություն են դարձրել ինչպես գիտության, այնպես էլ տոմարագիտության զարգացմանը: Այս հանգամանքը ցույց է

տալիս, որ այդ ժամանակաշրջանում հայերն անշուշտ ունեցել են ուրույն տոմար և հոգ են տարել այն կարգավորելու, կատարելագործելու համար:

Հնագույն շրջանում հայերի տոմար ունենալու օգտին է խոսել նաև վաղ միջնադարի հայ ականավոր գիտնական Անանիա Շիրակացին: Նա այն միտքն է հայտնում, որ հայոց հին տոմարի ամիսների անունների գոյություն են ունեցել մեր թվականից առաջ: Նա իր «Տիեզերագիտութիւն և տոմար» խորագրով աշխատությունում գրել է. «զի հայ ամսոցդ անուանք յառաջ քան զդնել թուականին հայոց էին: Եւ ոչ քան զայն միայն, այլև յառաջ, քան զմարդեղութիւն բանին Աստուծոյ»:

Հայոց տոմարի և հատկապես ամիսների հնության վերաբերյալ Հովհաննես Սարկավազը իր «Մեկնություն տոմարիս հայկազնէայ» աշխատությունում այն միտքն է հայտնում, որ հայոց ամիսները գոյություն են ունեցել հրեական Մովսեսի ժամանակաշրջանից ավելի առաջ: Այս կապակցությամբ Հովհաննես Սարկավազը գրում է. «Այլ հառաջ քան զՄովսես ոչ ուրեք էր գիտութիւն արուէստիս, բայց միայն ի հայ ամսոցդ, որ էին յառաջ քան զՄովսես, քանզի ասեն թէ ի ձեռն հոգւոյն, որ ազգեր ի նահապետսն, Հայկն առաջին նահապետն Հայոց, զամիսքդ կարգեաց և զանուանս ուստերաց և դստերաց իւրոց ամսոցդ կոչեաց»:

Հայտնի է, որ այս թվարկության 428 թվականին հայոց հին շարժական տոմարով նոր տարին՝ նավասարդի 1-ը համընկել էր օգոստոսի 11-ի հետ: Ելակետ ընդունելով այդ տվյալը՝ «Հայկայ շրջանի» սկիզբը ընդունվում էր այս թ. ա. 2492 թվականի նավասարդի 1-

ին, որը այդ թվին համապատասխանում էր, ըստ հուլյան օրացույցի հաշիվների, օգոստոսի 11-ին: Հիմնվելով այդ հաշիվների վրա Ղ. Ալիշանը եզրակացնում է, որ այս փաստը «բավականապես իրաւունք կուտան մեզի առանց տարակուսի ընդունելու Հայկայ շրջանին և մեր ազգութեան սկիզբը՝ այս թվարկությունից առաջ 2192 տարին և մեր ազգային գերագոյն տօնին համար օգոստոսի 11—23»: Ենթադրվում էր, որ հայ ժողովրդի առասպելական նախահայր Հայկ Նահապետը ասորեստանյան Բելին այդ ժամանակ է հաղթել և ի նշան այդ հաղթանակի հրամայել է, որ հաղթանակի օրը նոր դարագլուխ համարվի և տոնվի ամեն տարի:

«Հայկայ շրջանի» և ամանորը օգոստոսի 11-ին սկսելու հարցի շուրջը հանգամանորեն խոսել է Ղ. Ալիշանը իր «Յուշիկք հայրենեաց հայոց» աշխատությունում. նա ջանացել է գտնել փաստարկներ ամանորը օգոստոսի 11-ից սկսելու և հայոց հին թվականի սկզբնավորությունը 2492 թվականը համարելու օգտին: Ահա թե ինչ է գրում նա.

«...ավելի ստոյգ պատճառն է՝ Հայկայ դարձէն քիչ տարի վերջը՝ Բելայ յաղթուիլն և սպանումն, (որ եղաւ յամի 2492 Քրիստոսէ առաջ), ինչպես որ ցուցուց հասարակ հայկական թուականին անընդհատ յաջորդութիւնն: Մեր խնդրոյն համար աւելի պիտանին այս է, որ հին օտար ժամանակագրութիւն այ ամենայն ճշտությամբ կու համաձայնի Հայկայ թուականին հետ. վասն զի Ափրիականոս և Եւսէբիոս իրենց մանրամասն թիւերովը Բելայ թագաւորութեան վերջը կու նշանակեն վերոհիշյալ 2492 տարին Քրիստոսեն առաջ»:

Հայկ նախահոր անվան հետ կապված առասպելա-

կան թվականը որոշ տոմարագետների և պատմաբանների կողմից կոչվել է «Հայկայ թուական» կամ «Հայկայ շրջան»:

Ենթադրվում է, որ հայոց հին տոմարի ամիսների անունները կապված են առասպելական Հայկ նախահոր որդիների և դուստրերի անունների հետ, որի մասին Անանիա Շիրակացին գրել է. «Ձի Հայկ ոմն անուն աղեղնաւոր Հսկայ՝ տիրեաց Հայոց: Եւ բնակեալ ի հայս և յանուն նորա կոչեցան Հայք, նոյնպէս որդւոց և դստերաց իւրոց եղ անուանս. զոր առեալ հայոց զանուանս ուստերաց և դստերաց նորա եղին ի վերայ ամսոցդ՝ վասն մեծաբանը հօրն ու գաւակացն, և են այսոքիկ: Նաւասարդի, Հռոի, Սահմի և Մեհեկի, Արեգ, Մարերի դստերք էին Հայկին, Տրէ, Քաղոց, Արաց, և Հրոտից, որդիք էին Հայկին: Իսկ Մարգաց և Հարաւանց, զոր այժմ Ահկի կոչեն, այս ի գործոց անուանեցան զի ընդ այն ժամանակս ամառնայինք էին տրբա»:

Հայերը, մինչև քրիստոնեական թվականի ընդունումը, ըստ երևույթին, առաջնորդվել են բուն Հայոց թվականով, որն ընդունվել է նաև Հայոց եկեղեցու կողմից, և մինչև հիմա էլ այդ առասպելական թվականը պահպանվում է էջմիածնի օրացույցներում:

Ինչպես տեսնում ենք, հայերը օրացուցային տարին ընդունել են ոչ թե հավասար 365 և քառորդ, այլ 365 օրվա, որի շնորհիվ յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ նավասարդի 1-ը՝ նոր տարին, մեկ օրով արևադարձային տարվա նկատմամբ առաջ էր ընկնում: Հետևաբար, հայոց շարժական տոմարի նոր տարվա սկիզբը պետք է շրջեր տարվա բոլոր օրերում և երբ շեղումը հավասարվեր մեկ տարվա, նորից նոր տարին՝

նավասարդ ամսի 1-ը, կհամընկներ օգոստոսի 11-ին: Այդ համընկնումը կրկնվում է յուրաքանչյուր 1460 տարին մեկ անգամ, որովհետև քառորդ օրը կուտակվելով մեկ տարի է դառնում 1460 տարվա ընթացքում ( $1460 \times 0,25 = 365$ ): Նման հանդիպումներ բուն հայոց թվականի հետ, սկզբից հաշված՝ առաջին անգամ պետք է տեղի ունեցած լիներ 1032 տարում այս թ. ա. ( $2492 - 1460 = 1032$ ), և երկրորդ հանդիպումը՝ 428 թվականին՝ այս թ., այն ժամանակ, երբ վերացավ Արշակունյաց թագավորությունը: Բնական է, որ նշված հանդիպումների ժամանակ, նախքան անշարժ տոմարին անցնելը, առաջանում էր ավելամուտ կամ այսպես կոչված «նահանջից նահանջ» տարի, որն իհարկե օրացուցային հաշիվների մեջ խառնաշփոթություն էր առաջացնում:

Այժմ կանգ առնենք ևս մի կարևոր հարցի վրա, թե հայերը հնում, բացի շարժական տոմարից, ուրիշ անշարժ տոմար ունեցե՞լ են, թե՞ ոչ: Մեզ հասած տվյալները վկայում են այն մասին, որ հայերը դեռևս հեթանոսական շրջանում պետք է ունեցած լինեն նաև անշարժ տոմար, ըստ որի սահմանում էին նշանավոր տոների ժամանակը, ինչպես, օրինակ, Վարդավառի, Ծառոնց-ծաղկանց և այլ ազգային տոներ: Բնական է, որ Հայկական լեռնաշխարհի կլիմայական խիստ պայմաններում հիշյալ տոները կարող էին տոնվել միշտ տարվա նույն ժամանակում՝ ըստ անշարժ կամ «Սրբազան» տոմարի սահմանած հաստատուն ժամանակում, այլապես այդ տոների կատարումը՝ տարվա տարբեր ժամանակներում՝ անիմաստ կլիներ: Ինչպես օրինակ, անիմաստ կլիներ Վարդավառի տոնը ամռանը կատա-



րելու փոխարեն կատարել ձմռանը:

Հնում հայոց հաստատուն կամ անշարժ տոմարի ամանորը եղել է Արեգ ամսում, որը համապատասխանել է գարնանային օրահավասարին:

Այս առթիվ Ղ. Ալիշանը գրում է «...հարկ է ըսել թէ ուրիշ գիտուն ազգաց պես երկու տարի ունեին, մէկն քաղաքական, միւսն սրբազան՝ որ էր հաստատուն, և անտարակոյս ասոր սկիզբն էր հինգ ամսով մ' առաջ, արեգ ամսէն սկսելով, որուն անունն կու նշանակէ զարև. և կու սկսի բուն արեգակնային ըսուելու վայելուչ օրէն, այսինքն գարնանամուտէն (9-21 մարտի), և ասով այլ նաւասարդի գլուխն կամ քաղաքական տարեմուտն՝ նոյնպէս ճիշդ օգոստոսի 11-ին (23-ի) կու հանդիպի»:

Համապատասխան հաշվումները ցույց են տալիս, որ եթէ 552 թվականին հուլիսի 11-ը համապատասխանել է նավասարդի 1-ին, ապա նավասարդի 1-ը համընկել է եղել 428 թվականի օգոստոսի 11-ին և այդ ժամանակ Արեգ ամսի 1-ը իրոք համապատասխանել է գարնանամուտին՝ մարտի 9-ին:

Այն մասին, որ իրոք հնում հայերը կրօնական և ազգային տոների ու երկրագործական աշխատանքների ժամանակը որոշելու համար ունեցել են նաև անշարժ կամ «Սրբազան» տոմար, Ղ. Ալիշանը գրում է. «Ուրեմն մեր ազգն այլ՝ իր շարժուն քաղաքական տումարեն զատ՝ անշարժ, հաստատուն և Հին տումար մ' ունեցեր է. տումար մը կրօնական, երկրագործական և քաղաքավարական, որով և հաստատ ժամանակագրութիւն մը»:

Զուգահեռաբար երկու օրացուցային հաշիվ ունենա-

լու գործում հայերը եզակի չեն. հայտնի է, որ հին հրեաները նույնպես ունեցել են երկու օրացույց՝ քաղաքական և եկեղեցական՝ «Սրբազան»: Հրեաները եկեղեցական-կրոնական տոները որոշելու համար օրացուցային տարին նույնպես սկսել են գարնանային օրահավասարից և առաջին ամիսը հանդիսացել է նիսանը, իսկ քաղաքական օրացույցի հաշվով նոր տարին՝ թշրի ամսի 1-ը համապատասխանել է աշնանային օրահավասարին:

Մեր կարծիքով հայերի վերո նշված «սրբազան» (անշարժ) տոմարը կիրառել են նախաքրիստոնեական շրջանում, իսկ քրիստոնեությունն ընդունելուց հետո, «Սրբազան» տոմարի փոխարեն հավանաբար աստիճանաբար անցել են հուլյան տոմարի գործածությանը, որը հայոց եկեղեցու համար պաշտոնական տոմար է հանդիսացել մինչև 1923 թվականի նոյեմբերի 9-ը, որից հետո պաշտոնական տոմարը հանդիսացել է նոր կամ գրիգորյան տոմարը:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե հայերը ունեցել են լուսնային օրացույց, թե՞ ոչ: Որոշ հեղինակներ այն կարծիքին են, որ նախքան արեգակնային օրացույցին անցնելն հայերը լուսնային օրացույց են ունեցել, մի կարծիք, որի հետ համամիտ չենք: Մեր կարծիքով հայերը սկզբից ևեթ գործ են ունեցել արեգակնային օրացույցի հետ: Այս տեսակետից անհրաժեշտ է նշել, որ մարդկային պատմության մշակույթի սաղմնավորման ու նրա զարգացման հնագույն ժամանակներից սկսած հին ու նոր ժողովուրդները մինչև մեր օրերը օգտագործել են արեգակնային, լուսնային և լուսնա-արեգակնային համա-

կարգի օրացույցներ: Ընդ որում տարբեր ժողովուրդներ տարբեր ժամանակներում օգտագործել են հիշյալ երեք համակարգի օրացույցներից որևէ մեկը: Սակայն դարերի ընթացքում աստիճանաբար լայն տարածում ու կիրառություն է գտել արեգակնային համակարգի օրացույցը: Դա բնական է, որովհետև առանձնապես հնագույն շրջանում մարդկանց աշխատանքի ժամանակը խիստ առնչված է եղել տարվա եղանակների ժամանակի հետ, որի համար անհրաժեշտ էր ունենալ արեգակնային օրացույց: Պատահական չէ, որ տվյալ ժողովրդի մշակույթի զարգացման գործում լուսնային կամ լուսնա-արեգակնային համակարգի օրացույցներից արեգակնային համակարգի օրացույցին անցնելը համարվել է խոշոր նվաճում:

Այստեղ անհրաժեշտ է հիշատակել, որ մեզ հասած ձեռագիր և հնատիպ աշխատություններից երևում է, որ հայերը բացի ազգային հին տոմարից, օգտագործել են նաև հուլյան հին տոմարը, որի կիրառությունը մինչև հիմա ենթադրվում էր, որ հավանաբար նիկիական տիեզերական եկեղեցական ժողովի որոշմամբ ընդունվել է 325 թվականին: Ընդհանրապես այդ ժամանակվանից հուլյան տոմարը սկսել կիրառել քրիստոնեությունը ընդունած ժողովուրդները:

Ենթադրվում էր, որ հայերը նույնպես այդ ժամանակ պետք է սկսած լինեն օգտագործել հուլյան տոմարը:

Սակայն, ըստ Ղ. Ալիշանի «Հուշիկք հայրենեաց հայոց» աշխատությունում բերված տվյալների, հայերը հարկադրաբար անցել են հուլյան տոմարի կիրառությանը դեռևս 122 թվականին, այն ժամանակ, երբ հայերը հարկատու էին հռոմեական ինքնակալությանը, սկզբում

Տրայիանոս և ապա Ադրիանոս կայսրի օրոք: Այս առթիվ չափազանց հետաքրքրական է Ղ. Ալիշանի կարծիքը և Յովհաննես Իմաստասերից բերած մեջբերումը, որպես վկայություն: Ալիշանը գրում է. «...ի 122 թուին Քրիստոսի, էր Յովանայեցւոց տունարին համաձայնութիւն մը, թողլով ըստ մասին հին Յայկազանց կարգը և ժամանակաչափութիւնը: Այս բանիս վկայ կ'ըլլայ հնախոյզ և բազմահմուտ Սարկավազն մեր, որ կըսէ թէ «Յաւասոռապես ի ճիԲ-ում Քրիստոսի աւարտ առ թուականն Յայկայ». թուականին ավարտելն՝ ոչ լմըննալ՝ այլ ի հարկէ դադարել իմանալու է...»:

Այստեղ Ալիշանը իրավացիորեն նշում է, որ հայոց տոմարը ոչ թե ավարտվեց կամ վերջացավ, այլ դադարեց, որովհետև Յայաստանի վիճակն այնպիսին էր Յռոմի նկատմամբ, որ, ըստ երևույթին, հարկադրված են եղել անցնել հռոմեական տոմարի գործածության: Սակայն պետք է նշել, որ հայերի կենցաղում անտարակույս շարունակվել է իրենց ազգային հին տոմարի կիրառում, տոմար, որի վերաբերյալ մեզ հասած փաստարկները շատ աղքատիկ են: Այս հարցը հետաքրքրություն է ներկայացնում այն տեսակետից, որ մինչև հիմա տոմարագիտական աշխատություններում չի լուսաբանված:

Այնուհետև հետաքրքրական է նշել նաև այն մասին, որ, համաձայն Ադանայում 1371 թվականին կայացած 44-րդ ժողովի, հայերը պաշտոնապես հրաժարվել են հայոց հին տոմարից: Սակայն կենցաղում շարունակվել է հայոց տոմարի կիրառությունը, որպես քաղաքացիական տոմար, իսկ որոշ պատմիչներ մինչև 19-րդ դարը ներառյալ իրենց աշխատություններում ժամա-

նակագրությունը տարել են ըստ հայոց շարժական և անշարժ տոմարների: Հուլյան տոմարը այդքան վաղ շրջանից կիրառելը հնարավոր է այն տեսակետից, որ եկեղեցական-կրոնական և ընդհանրապես շարժական տոները հավանաբար որոշել են, ըստ հուլյան տոմարի:

Մեզ հասած տոմարական տվյալները վկայում են այն մասին, որ հին ժողովուրդներից շատերը, հին եգիպտացիները, մարերը, հին պարսիկները ունեցել են, ըստ երևույթին, իրարից անկախ արեգակնային օրացույցներ:

Հայոց հին տոմարից մինչև հիմա մեզ հասած տոմարական հիմնական տարրերը՝ տարվա տևողությունը 365 օր, ամիսների թիվը 12 և յուրաքանչյուր ամսվա 30-ական օր պարունակելը և հինգ լրացուցիչ օրեր ունենալը վկայում են այն մասին, որ իրոք հայոց տոմարը եղել է արեգակնային: Այս առթիվ անհրաժեշտ է բերել հետևյալ վկայությունը. «Հայերը հին ատենեն ի վեր արեգակնային տարի գործածել են...»:

Հայոց լեռնաշխարհում բնակվող մարդիկ մեր կարծիքով սկզբից ևեթ աշխատել են ունենալ արեգակնային օրացույց, որովհետև երկրի բնական կլիմայական պայմանները, ըստ տարվա եղանակների, խիստ են իրարից տարբերվում՝ ձմռանը լինում է խիստ սառնամանիք, իսկ ամառը՝ խիստ շոգ: Նման պայմաններում բնակվողների համար արեգակնային օրացույց ունենալը կենսական անհրաժեշտություն է եղել առանձնապես երկրագործությամբ զբաղվելու դեպքում:

Արեգակնային օրացույցի տարին հանդիսացել է Արեգակի՝ կենդանակերպի գոտում մի լրիվ շրջան կա-

տարելու ժամանակամիջոցը՝ 365 օրը, որը բաժանելով 12-ի, ստացվել է 30-ական օր պարունակող 12 ամիս և հինգ լրացուցիչ օր:

Կարևոր է նշել, որ մեր թվականից մոտ 3000 տարի առաջ 12 կենդանակերպի հասկացությունը հայտնի է եղել Փոքր Ասիայում, Արարատի մոտակայքում և Միջագետքում բնակվող ցեղերին ու ժողովուրդներին: Սակարևոր է, որովհետև կենդանակերպի 12 համաստեղությունները խոշոր դեր են խաղացել օրացույցի պատմության զարգացման գործում:

Այս մասին վկայում են հետևյալ փաստարկները: Իր ժամանակի գիտուն տոմարագետ Սյուրմեյանը գրել է.

«Տարին տիրապես սահմանի յայն միջոց ժամանակի, յորում արեգակն անցանէ ընդ Երկոտասան կենդանատեսակս զողիակոսին իւրով յետադարձ շարժմամբն, այս է՝ յարևնտից դեպ յարևելս», - այնուհետև Սյուրմեյանը գրում է նույն աշխատությունում, - «ի ժամանակաց անտի Ամն Հայոց էր արեգակնային» այս է կանոնաւորեալ ըստ շարժման արեգական, որպես էին և ամբ բաբելացւոց, մարաց, պարսից և եգիպտացւոց... Ջաւուրս տարւոյն բաժանեցին յերկոտասան ամիսս, իւրաքանչիւր ամսոց տալով 30 աւուրս, և յետ երկոտասան ամսոց՝ որ առներ 360 աւուրս: Եղին Աւելեաց 5 օր միայն, որով ամն տոմարական լիներ 365 օր. առանց առնելոյ երբեք նահանջ»:

Վերոհիշյալ հարցի առթիվ ավելի որոշակի վկայություն է բերված Գ. Աղանյանցի կողմից, նա գրում է.

«Արեգակնային ամիս ասվում է այն ժամանակամիջոցը, երբ Երկիրը համաստեղության մեկ կենդանակերպից հասնում է մինչև մյուսը և որովհետև Երկիրը արևի

շուրջը պատվում է, կամ որ նույնն է Երկիրը համաստեղության տասներկու կենդանակերպի առջևով անցնում է 365 օրվա ընթացքում, ուրեմն այդքան միջոցը տասներկու մաս բաժանելով իմանում ենք, որ մի ամիսը ունի 30 օր, 10 ժամ, 29 րոպե և 4 մանր երկրորդ»:

Արեգակնային ամիսը գրեթե նույն ձևով է ձևակերպված նաև «Տարերք Բանակագրութեան» գրքում. «Արեգակնային ամիսը կըսուի այն միջոցը, որ իրը Ջօդիակոսին մեկ կենդանակերպէն մեկալ կենդանակերպը կը հասնի»:

Տարին տասներկու ամսի բաժանելու առթիվ Շիրակացին գրել է. «Ձինչ ժԲ ամիս է տարին», այսինքն՝ ինչու է տարին 12 ամիս: Նա այս հարցին անմիջապես պատասխանում է հետևյալ կերպ.

«Այս ըստ աշխարհի մասանց, և ըստ կենդանակերպանց, և ըստ ժամուց տունջեան և գիշերոյ և ըստ հոգանխորհրոյ:

Վասն զի մեծախորհուրդ իմն է Երկոտասան թիւդ»:

Շիրակացու երկտողը փայլուն վկայություն է, որ իրոք տարին տասներկու ամսի բաժանելու հարցը առնչված է 12 կենդանակերպի թվի, ինչպես և 12 թվի հետ առնչված այլ երևույթների հետ:

Մյուս կողմից եղած փաստարկները վկայում են այն մասին, որ հայերը սկզբից ևեթ ունեցել են ինքնուրույն արեգակնային համակարգի օրացույց, իսկ լուսնային օրացույց ունենալու մասին համոզեցուցիչ փաստարկներ մեզ հայտնի չեն:

Չնայած այն հանգամանքին, որ հայոց տոմարի սկզբնավորումը շատ հին ծագում ունի, համեմատաբար ավելի զարգացած տոմար է եղել, բայց և այնպես

եղել են որոշ հետազոտողներ, որոնք առանց լուրջ փաստերի ջանացել են ցույց տալ, որ հայերն այդ ժամանակ չէին կարող ինքնուրույն զարգացած տոմար ունենալ և որ հայերը իրենց տոմարը ընդօրինակել են եգիպտացիներից: Դա պատճառաբանվել է նրանով, որ հայերի զարգացման աստիճանը համեմատաբար ցածր է եղել, որի շնորհիվ տոմար ստեղծելու պայմաններ չկային: Այս կարծիքն է ունեցել Լ. Սենյոնովը, երբ գրել է.

«Հին հայոց երկրում նման տիպի տոմար ստեղծելու պայմաններ չեն եղել, նման տիպի տոմար կարող էր զարգանալ տնտեսական բարձր աստիճանի հասած մարդկային հասարակության մեջ, ինչպիսին էր Եգիպտոսը, և պարզ է, հայերը պետք է ընդօրինակած լինեն կամ անմիջապես Եգիպտոսին կամ մի այլ ժողովրդից, որն իր հերթին ընդօրինակել էր Եգիպտոսից»: Այս կարծիքը չի կարելի համարել հիմնավորված, որովհետև ամբողջությամբ վերցված հայոց տոմարն ավելի հանգամանորեն մշակված տոմար է եղել, քան եգիպտականը: Հայտնի է, որ Եգիպտոսում սովորություն է եղել տասնօրյա և հնգօրյա շաբաթների գործածությունը. հին եգիպտացիները չեն ունեցել յոթնօրյա շաբաթ, ինչպիսին հին ժամանակներից սկսած գործածվել է հայոց տոմարում: Եվ բացի այդ, հայոց ամիսների օրերն ունեն առանձին անվանումներ, որոնք հայկական ծագում ունեն: Առանձին անուններ ունեն նաև օրվա 24 ժամերը: Ավելյաց ամսի հինգ օրերը կոչվել են հեթանոսական շրջանից հայտնի հինգ մոլորակների անուններով: Նման անվանումներ եգիպտական օրացույցում և առհասարակ մյուս ազգերի օրացույցներում մեզ հայտնի



չեն, բացառությամբ հին պարսկական օրացույցի, որի ամիսների օրերը նույնպես ունեցել են առանձին անուններ (գենդերեն և պահլավերեն, տես պարսկական օրացույցը):

Այսպիսով, հայոց և եգիպտական տոմարի ամիսների անունների միջև նմանություն չկա:

Հայոց տոմարի եգիպտական օրացույցից չընդօրինակված լինելու օգտին ավելի համոզիչ փաստարկ կարելի է համարել այն, որ հայոց և եգիպտական տոմարների տարեսկիզբները, ինչպես շարժական այնպես էլ անշարժ տոմարներով իրարից շեղված են եղել: Ըստ շարժական տոմարների, տարեսկիզբները շեղված են եղել շուրջ երեք ամսով: Հայտնի է, որ հռոմեական Օգոստոս կայսեր տիրապետության ժամանակ՝ 26 թվականին (ա.թ.ա.), եգիպտացիների օրացույցում կատարվել է բարեփոխություն, այսինքն եգիպտական հին շարժական օրացույցից անցել են անշարժ օրացույցի կիրառության: Այդ ժամանակ եգիպտական օրացույցով թոթ ամսի 1-ը՝ նոր տարին, համընկած է եղել հուլյան տոմարով օգոստոսի 29-ին, որը շարունակվել է հետագայում, որպես անշարժ տոմար:

Հայոց տոմարի պատմությունից հայտնի է, որ 428 թվականին (ա. թ.) Նավասարդի 1-ը համընկել է օգոստոսի 11-ին:

Եթե եգիպտական օրացույցը շարունակվեր որպես շարժական օրացույց, ապա նրա 2-ից մեկը տարեսկիզբը 428 թվականին կհամապատասխաներ մայիսի 8-ին:

Այսպես կստացվեր, որովհետև 26 թ. (ա. թ. ա.) մինչև 428 թ. (ա. թ.) կազմում է 454 տարի, որը 4-ի բաժանելիս ստացվում է 113 նահանջ տարի: Նշանակում է, թոթ

ամսի 1-ը հետադարձ ուղղությամբ տեղաշարժված կլինեն մայիսի 8-ը, որովհետև օգոստոսի 29-ից մինչև մայիսի 8-ը կազմում է 13 օր: Այլ կերպ ասած, հայոց շարժական տոմարի տարեսկզբի նկատմամբ առաջ ընկած կլինեն 95 օրով:

Բացի վերոհիշյալ փաստարկներից, կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ Եգիպտական սիստեմի օրացույցի մեջ ընդգրկվել են վեց ազգ, դրանց թվում վրացիները, աղվանները և այլ ազգեր, որոնց նոր տարին նույնպես զուգակցվել է թոթի 1-ին կամ օգոստոսի 29-ին, իսկ հայերը չեն մտել այդ խմբի մեջ, այլ շարունակել են առաջնորդվել իրենց ուրույն ազգային շարժական տոմարով: Անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն հարցին, թե կենդանակերպի կամ ընդհանրապես համաստեղությունները կենդանիների ձևով պատկերացնելու գաղափարն առաջին անգամ որտեղ է առաջացել: Այդ տեսակետից չափազանց ուշագրավ են Օլկոտտի աշխատության՝ մեջ բերված մի շարք փաստեր: Օլկոտտը կարծում է, որ աստղային խմբերը կենդանիների տեսքով պատկերացնելը շատ վաղ ժամանակներից է գալիս: Ենթադրվում է նաև, որ համաստեղությունները կենդանիների տեսքով պատկերացնելու ժամանակներում գարնանային օրահավասարի կետը գտնվելիս է եղել Ցուլի համաստեղությունում: Եթե դա այդպես է, ապա աստղադիտական համապատասխան հաշվումները ցույց են տալիս, որ գարնանային օրահավասարի կետը կարող էր գտնվել Ցուլի համաստեղությունում մոտավորապես 3000 տարի այս թ. ա.: Հետևաբար, գարնանային օրահավասարի կետը Ցուլի համաստեղության նկատմամբ

ներկա դիրքը ունենալու համար անցել է մոտավորապես 5000 տարի: Նշանակում է համաստեղություններին կենդանիների անուններով անվանելը շուրջ 5000 տարվա պատմություն ունի:

Աստղագիտական, պատմագիտական և հնագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ համաստեղություններին կենդանիների անուններ վերագրող մարդիկ հավանաբար ապրել են Եփրատ գետի հովտում և Արարատ լեռան շրջակայքում:

Այնուհետև, Օլկոտտի աշխատությունում հիշատակված է, որ նշանավոր հնագետ Մաունդերը, որը լրջորեն զբաղվել է համաստեղություններին կենդանիների ձևով պատկերելու հարցի հետազոտությամբ պեղումների շնորհիվ շատ հետաքրքրական հայտնագործություններ է կատարել: Մեզ հետաքրքրող հարցի առթիվ նա գրում է. «Չետաքրքրական է համաստեղությունների հին պատկերների արտաքին տեսքը, նրանք զբաղեցնում են միայն երկնքի մի մասը, իսկ հարավային կիսագնդում անկանոն շրջանի տեսք ունեցող մի ընդարձակ տիրույթ թողնված է միանգամայն դատարկ: Այդ փաստը բացատրելու համար, առաջին անգամ Սվարցր արել է շատ սրամիտ ենթադրություն. նա ասում է, որ այդ տարածությունը թողնվել է դատարկ, որովհետև համաստեղությունները հորինող մարդիկ ապրել են այնքան դեպի հյուսիս, որ հնարավոր չէր տեսնել երկնքի այդ մասը»:

Մաունդերի կարծիքով, այն մարդիկ, որոնք երկինքը բաժանել են համաստեղությունների, հավանաբար պետք է ապրելիս լինեին հյուսիսային լայնության 36 և 42 աստիճանների միջև ընկած տարածությունում, այն-

պես որ համաստեղությունների նշանակման հայրենիքը չէր կարող լինել ո՛չ Եգիպտոսը և ո՛չ էլ Բաբելոնը: Օլկոտտն իր աշխատության մեջ պատմում է այն մասին, որ պատկերած համաստեղությունների շարքում չկան փղի, ուղտի, գետաձիի, կոկորդիլոսի և վագրի անուններ կրող համաստեղություններ, հետևաբար կարելի է ենթադրել, որ ո՛չ Յնդկաստանը, ո՛չ Արաբիան, ոչ էլ Եգիպտոսը չէին կարող հանդիսանալ այն վայրերը, որտեղ ծագել է երկնային ոլորտը համաստեղությունների բաժանելու գաղափարը, իսկ Իտալիան, Իսպանիան և Յունաստանը կարող ենք, որպես բացառություն, դուրս հանել, որովհետև համաստեղություններից մեկը համարվում է Առյուծի համաստեղություն: Օլկոտտի կարծիքով համաստեղություններին կենդանիների անուններ տալու հայրենիքը հավանաբար եղել է Փոքր Ասիան և Հայաստանը, այսինքն՝ այն տարածքը, որը սահմանագծված է Սև, Միջերկրական, Կասպից և էգեյան ծովերով:

Այս փաստերը կարող են հիմք ծառայել ենթադրելու, որ մոտավորապես առասպելական Հայկ նախահոր վաղնջական ժամանակներում է սկիզբ առել համաստեղություններին կենդանիների անուններ վերագրելը, որովհետև հիշյալ ժամանակաշրջանը մոտավորապես համապատասխանում է հայոց առասպելական հին թվականի սկզբնավորման ժամանակին՝ 2492 տարի այս թ. ա.:

Առանձնապես ուշադրության արժանի են Օլկոտտի վերը նշված աշխատությունում հիշատակված փաստերն այն մասին, որ հնագույն հուշարձաններից մեզ հասած աղյուսակներից երևում է որ ակադացիներն են

բաբելացիներին ծանոթացրել կենդանակերպի գաղափարանիշների հետ, որոնք ակկադացիներին հայտնի էին մոտավորապես 3000 տարի այս ք ա.:

Այնուհետև, չափազանց հետաքրքրական է այն փաստը, որ եգիպտացիների հնագույն հուշարձանների վրա հայտնաբերված կենդանակերպի տասներկու նշանների հիման վրա համոզվել են, որ աստղերի մասին իրենց ունեցած տեղեկությունները քաղել են քաղդեացիներից: Յետաքրքրական է նաև այն, որ կենդանակերպի համաստեղություններից բացի, հնագույն շրջանում ամենից առաջ հայտնի էին Մեծ Արջ, Օրիոն-Չայկ և Պլեյադներ-Բազումք համաստեղությունների անունները, որոնք նույնպես պահպանվել են մինչև մեր օրերը:

Այսպիսով, վերը նշված փաստարկները հիմք են ծառայում հանգելու եզրակացության, որ հայերը իրենց տոմարը չեն ընդօրինակել եգիպտացիներից, ինչպես կարծել են ոմանք, այլ ունեցել են ինքնուրույն տոմար:

## **ՀԱՅՈՅ ԱՆՇԱՐԺ ՏՈՄԱՐԸ (Հովհաննես Սարկավազի բարեփոխությունը)**

11-րդ դարի երկրորդ կեսում հայոց տոմարի մեջ արմատական բարեփոխություն կատարելու անհրաժեշտություն է զգացվել: Այդ ժամանակ հայոց տոմարի կարգավորման հարցերով հանգամանորեն զբաղվել է անվանի գիտնական, լավագույն տոմարագետ Հովհաննես Սարկավազը: Նրան հաջողվել է հայոց տոմարի մեջ կատարել արմատական բարեփոխություն, նա շարժական տոմարի փոխարեն կազմեց անշարժ տոմար, այսինքն՝ մտցրեց նահանջ տարվա գործածությունը: Հայոց շարժական տոմարը անշարժ դարձնելու բարեփոխությունը Հովհաննես Սարկավազի կողմից հավանաբար կազմվել է այն ժամանակվանից, երբ վերջացել էր Անանիա Շիրակացու 532-ամյա շրջանի համար կազմած օրացույցը: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Սարկավազը հայոց տոմարի վերաբերյալ կատարել է այնպիսի բարեփոխություն, ինչպիսին ցանկանում էր կատարել Անաստաս կաթողիկոսը Անանիա Շիրակացու միջոցով 7-րդ դարում: Մինչ այդ բարեփոխությունը հայոց օրացույցային տարին ընդունված էր 365 օր, որը հռոմեական և այլ անշարժ օրացույցների նկատմամբ յուրաքանչյուր 4 տարին մեկ անգամ մեկ օրով առաջ էր ընկնում, այսինքն Հայոց տոմարը նահանջ տարի չուներ, ինչպիսին ուներ հուլյան տոմարը և այլ ազգերի օրացույցները:

Հովհաննես Սարկավազը շարժական տոմարից ան-

շարժին անցնելու բարեփոխության հետ միաժամանակ 1085 թվականի օգոստոսի 11-ի հաշվով սկսեց նոր թվական, որը կոչվում է հայոց «փոքր թվական» կամ «Սարկավագադիր թվական»:

Մի շարք հայ պատմագիրներ և մատենագիրներ իրենց կազմած հիշատակարաններում և տոմարական աշխատություններում հայոց Մեծ թվականին զուգահեռ գործածել են նաև Սարկավագադիր թվականը:

Սակայն պետք է նշել, որ Սարկավագի բարեփոխած տոմարը հայոց եկեղեցական ժողովի կողմից չի քննարկվել պաշտոնապես հաստատելու և ընդունելու նպատակով: Բայց, քանի որ Սարկավագի կազմած տոմարը ավելի հարմար ու դյուրին գործածելի է եղել, հայոց եկեղեցին կրոնական և այլ տոների համար նպատակահարմար է գտել առաջնորդվել Սարկավագի կազմած անշարժ տոմարով, իսկ քաղաքացիական կյանքում շարունակել են առաջնորդվել մինչ այդ գոյություն ունեցող շարժական տոմարով, պահպանելով հայոց Մեծ թվականը: Այլ կերպ ասած՝ սկզբնական շրջանում Սարկավագի կազմած անշարժ տոմարը լայն կիրառության չի արժանացել:

Հովհաննես Սարկավագի բարեփոխությամբ հայոց ամիսների վերաբերյալ փոփոխություն չի կատարվել, բացառությամբ այն բանի, որ նահանջ տարիներին Ավելեաց ամիսը, որը մինչև այդ հաշվում էին 5 օր, հաշվել են 6 օր:

Համապատասխան հաշվումները ցույց են տալիս, որ Սարկավագի բարեփոխության ժամանակ, հայոց շարժական տոմարի համաձայն, նոր տարին՝ նավասարդի 1-ը, համապատասխանում էր փետրվարի 29-

ին, սակայն Սարկավազը այդ օրը չընդունեց տարեկիզբ կամ նոր տարի և բացի այդ, այս հարցում չընդօրինակեց օտար ազգերի օրացույցներին (այսինքն նոր տարին չհամապատասխանեցրեց նրանց նոր տարվա հետ), որոնք վաղուց անցել էին անշարժ օրացույցների գործածությանը: Նա հավանաբար հանգամանորեն հետազոտել է այն հարցը, թե հնում հայոց բուն թվականը սկզբնավորվելու ժամանակ նոր տարին ե՞րբ է սկսվել: Մեզ հասած տվյալները վկայում են այն մասին, որ դեռևս հեթանոսական շրջանում հայերը նոր տարին տոնում էին նավասարդ ամսի 1-ին, որը համապատասխանում էր հռոմեական օրացույցով օգոստոսի 11-ին:

Քանի որ Հովհաննես Սարկավազի բարեփոխության ժամանակ հայոց նոր տարին՝ նավասարդի 1-ը, օգոստոսի 11-ի նկատմամբ հետադարձ ուղղությամբ տեղաշարժվել էր փետրվարի 29-ը, ուստի հուլյան տոմարի նկատմամբ առաջ էր ընկել 164 օրով (1085—428: 4 = 164 նահանջ տարի): Միանգամայն բնական է, որ Հովհաննես Սարկավազը իր կազմած անշարժ օրացույցով ցանկացել է նոր տարին դարձյալ համարել տարվա այն օրը, որն առաջին շրջանում տոնել են մեր նախնիները: Հավանաբար դրանից ելնելով նա իր բարեփոխած անշարժ տոմարի նոր տարին՝ նավասարդի 1-ը, որը համընկնում էր փետրվարի 29-ին, միանգամից տեղափոխել էր օգոստոսի 11-ը: Պատմությունից հայտնի է, որ այլ ազգերի օրացույցները բարեփոխելիս նույնպես տեղի են ունեցել տարեմուտի տեղափոխման դեպքեր: